ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

No 66-Ա/2 «27» դեկտեմբերի 2021 թ.

2021 ԹՎԱԿԱՆԻՆ ԸՍՏ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԹՎԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԲԱՆԱՁԵՎԻ ԳՈՐԾԱԿԻՑՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի օգոստոսի 24-ի N 1262-Ն որոշման 2-րդ կետը՝

Հրամայում եմ

1. Հաստատել 2021 թվականին պետական հանրակրթական դպրոցների՝ ըստ սովորողների թվի ֆինանսավորման

ԸԳ = ՍԹ x ՍԳ1 + (ՏԴԹ x ՏԴՐ + ՄԴԹ x ՄԴՐ + ԱԴԹ x ԱԴՐ) x ՈՒՆԱ x 12 + ՀԴԾ

և ԸԳ = ՍԹ x ՍԳ2 + ՀԴԾ բանաձևերի գործակիցները՝ հետևյալ չափերով.

1) ՍԳ1՝ մինչև 73 սովորող ունեցող տարրական, մինչև 163՝ հիմնական, մինչև 208՝ միջնակարգ հանրակրթական դպրոցներում, մինչև 136 սովորող ունեցող վարժարաններում և ավագ դպրոցներում մեկ սովորողին ընկնող տարեկան գումարը՝ 27506.3 դրամ,

2) ՍԳ2-ը՝ 73 և ավելի սովորող ունեցող տարրական, 163 և ավելի՝ հիմնական, 208 և ավելի՝ միջնակարգ հանրակրթական դպրոցներում և 136 և ավելի սովորող ունեցող վարժարաններում և ավագ դպրոցներում մեկ սովորողին ընկնող տարեկան գումարը՝ 80775.76 դրամ+ ՍԳ1,

3) ՈՒՆԱ-ն՝ ուսուցիչների նվազագույն աշխատավարձը մեկ դրույքի համար՝ 108800 դրամ,

4) ՀԴԾ-ն ՝ համադպրոցական ծախսերն են մինչև 100 սովորող ունեցող դպրոցների համար՝ 14273.2 հազ. դրամ, 101-ից մինչև 300 սովորող ունեցող դպրոցների համար՝ 17224.8 հազ.դրամ, 300 և ավելի սովորող ունեցող դպրոցների համար՝ 22374.0 հազ. դրամ:

5) ՏԴր-ն, ՄԴր-ն և ԱԴր-ն ՝ տարրական, միջին և ավագ դպրոցներում միջին հաշվով մեկ դասարանին ընկնող ուսուցչական դրույքների թիվը՝ համապատասխանաբար՝ 1.1136, 1.4909, 1.5455:

2. Հաշվարկը կատարելիս կիրառել լրացուցիչ գործակիցներ՝ համաձայն հավելվածի:

3. Սովորողների թվաքանակից ելնելով՝ ոչ ուսուցչական անձնակազմի (վարչական, մանկավարժական, ուսումնաօժանդակ) հաստիքների հաշվարկային թվաքանակը սահմանել՝ մինչև 100 սովորող ունեցող դպրոցների համար՝ 9.8, 101-ից մինչև 300 սովորող ունեցող դպրոցների համար՝ 11.8, 301 և ավելի սովորող ունեցող դպրոցների համար՝ 15.3:

4. Որպես դպրոցի սովորողների թիվ (Սթ) և դասարանների թիվ (ՏԴթ, ՄԴթ, ԱԴթ) ընդունվում է սովորողների և դասարանների փաստացի թվաքանակը 2021 թվականի հունվարի մեկի դրությամբ, որը ենթակա է ճշտման ուսումնական տարվա սկզբին՝ հաշվի առնելով դասարանների փաստացի կոմպլեկտավորումը թվաքանակի միջին տարեկան մեծության հաշվարկման նպատակով:

ՆԱԽԱՐԱՐ **Վ. ԴՈՒՄԱՆՅԱՆ**

Recoverable Signature

X

ՎԱՀՐԱՄ ԴՈՒՄԱՆՅԱՆ

Signed by: DUMANYAN VAHRAM 1909620211

Հավելված

Հայաստանի Հանրապետության

Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի

2021թ. ....-ի N .....-Ա հրամանի

Պետական հանրակրթական դպրոցների ֆինանսավորման բանաձևի լրացուցիչ գործակիցներ

Բանաձևի անդամը	Տարրական դպրոցի մակարդակում	Միջին դպրոցի մակարդակում	Ավագ դպրոցի մակարդակում	Առանձին գործող ավագ դպրոցների համար նաև	Լեռնային բնակավայրերի դպրոցների համար	Բարձր լեռնային բնակավայրերի դպրոցների համար	Բնական գազով չջեռուցվող դպրոցների համար
ՈւՆա	-	-	-	1.2	-	1.074	-
Սգ1	-	-	-	-	1.132	1.183	1.77
Սգ2	1.0	1.3388	1.6653	1.2	-	1.074	-
ՀԴԾ	-	-	-	1.038	-	1.066	-